





# Ա Ր Ա Խ Ե Ր Գ Ի Չ


Ա Տ Ա Ւ Պ Ա Ռ Ա Տ 1961 թ.

Ն Ա Հ Ա Պ Ե Տ Ք Ո Ւ Զ Ա Կ Ի Ե Ր Գ Ե Ր Լ

մ տ ա կ ե ց

Գ է Ա Ր Գ Ա Վ Ա Տ Ա Ւ Ի Ր

5783



թիվ 119

Տպարան «ՀԵՐԱԿՈ», Մայակ համբ փողոց 15.

1905

82

Дозволено цензурою. Тифлисъ 11 января 1905 г.

1883 թ. Արքայի. կ. Տէվկանց աշխարհ հանեց «Հայերդ» անունով մէկ ժողովածու, որի մէջ ի միջի այլ «մեղեղիների», տաղերի և երգերի» տպուած էր և մէկ երդ (անելի ուղիղն առաջ՝ երգերի մէկ խումբ), որի մասին նա իր տաճարանում տուում է. «այս... երդն Նահապետ վարպետ Քուչակինն է»:

Նրանից յետոյ պ. Կաստանեան իր «Միջ-  
նադարեան հայոց տաղերի ժողովածուի» և ապա պ.  
Արշ. Չօպանեան «Նահապետ Քուչակի դիւտնիւ մէջ  
հրատարակեցին մի շարք երգերի, որոնց մէկ մասը  
յայտնի էր «Հայերդից», իսկ մէկ մասը բոլորովին  
անյայտ, բայց ձեռվ, արտաքինով նման առաջինին:  
Թէպէտ այն օրինակներում, որոնցով օգտուեցին պ.  
պ. Առաքանեան և Չօպանեան, վերոյիշեալ երգերի  
հեղինակի անունը չէր տուած, այնուամենայնիւ հը-  
րատարակիչները առանց տատանուելու այդ երգերը  
վերադրեցին Նահապետ Քուչակին՝ նրանց ունեցած  
նմանութեան համար Տէվկանցի հրատարակած «Քու-  
չակի» երգերի հետ:

Սակայն «Հայերդից» չէ երեսմ, թէ ինչի վեա  
է հիմնում հ. Տէվկանց վերադրելով այդ երգի ըլ Նա-  
հապետ Քուչակին. արդեօք նրա օգտուած օրինակից  
է այդ բանը երեսմ, թէ նա զեկավարում է այլ,  
նեղ անյայտ, դիտութերով: Բայց բանի որ մինչև

այժմ քուչակեան երգերի մեզ յայտնի օրինակներից ոչ մէկը զեռ չէ տուել հեղինակի անունը, այդ երգերի վերագրելը նահապետ Քուչակին պէտք է համարիլ վաղաժամ և ստուգութեան կարօտ նրանց հեղինակ Քուչակին համարելը մենք ընդունում ենք առայժմ իրրե և նթաղրութիւն, և այդ տեսակէտից ենք նայում անուանելով այդ երգերը «քուչակեան»:

Քուչակեան ժողովածուի մէջ հանդիպում են երգեր, որոնց հեղինակ ուրիշներն են համարում (օր. Ֆրիկ, Պլուղ և այլն). հանդիպում են և երգեր, որոնք համարեան նոյնութեամբ երգուում են հիմա էլ Ակնի և վանի ժողովրդների մէջ. բայց երգերի մեծապոյն և էական մասը, որոնց լեյտ-մօտիւը զգայական սէրն է, անյայտ ծագումի է զբանահում: Այդ երգերն են, որ իրանց անկեղծ-համարձակ ոճով, դարձուածքների զեղարուեստական հրատարակութերով, համեմատութիւնների անդուզական ինքնուրոյնութեամբ. պատկերների հրաշալի ուշալ-զունազեզութեամբ նրանց հեղինակին անպայման իրաւունք են տալիս տափնակարգ բանաստեղծների տեղը զբաւելու:

Քուչակեան երգերի հեղինակը և խմբագրողը ըստ երեսութիւն միենայն անձը չէ եղել: Հեղինակը, որ պատմել է ժողովրդական լեզուով, երգել ժողովրդական մօտիւներով իր անձնական սէրը, անկանած ունեցել է մեծ ժողովրդականութիւն, որի առանձին ապացոյց կարող է լինել այն, որ ժողովուրդը դարերի ընթացքում վառ պահել է իր սրտում նրա յիշտառակը առանց կողմանակի (հոգեսորականութեան) աղքացութեան և սրբացրել է նրա շիրիմը: Նահապետ Քուչակը երգել-արտասանել է հանճարին յատուկ պարզութեամբ իր զգացմանքները և հանճարին յա-

տուել անփութութեամբ գրի չէ տոել նրանց: Սակայն նրա երդերը անցնելիս են եղել բերանէ բերան և ժամանակի ընթացքում ձուլուել-հիւսուել են իրանց հարազատ ժողովրդական երդերի հետ, և այնպէս սերտ, որ նրանց ջոկել իրարից անջատել արդէն դժուար է եղել ապազայում: Եւ երբ ժամանակով Քուշակին սիրողները (գուցէ նրա աշակերտները), ձեռնարկել են խմբագրելու այդ երդերը, նրանք հանգիպէլ են դժուարութիւնների: Նրանք Քուշակի երդերի հետ հաւաքել են շատ բան, որ նրան չէ պատկանում և շատ անզամ ազաւազել այն, որ նրան է պատկանում \*):

### Բայց ով էր Քուշակը:

Տարարադդարար՝ նրա մասին ոչ մի զրաւոր յիշատակ չէ մնացել: Հ. Տէվկանց միայն «Հայերգի» առաջարանի մէջ՝ իր յիշատակած ժողովրդական զանազան երդիչների թւում՝ յիշում է նուև «Նահապետ վարպետ (մականուն՝ Քուշակ) Խառակոնիսցի»: Աւրեմն, ըստ Տէվկանցի, Նահապետ վարպետ (այսինքն՝ բանաստեղծ) Քուշակը ծնուել է Խառակոնիսցի:

\* ) Նայն դրութեան մէջ ենք և մենք ներկայումս Հայ Փօլկ-լուսի մէջ հանդիպում են երգեր, որոնք անպին առնցութիւն ունեն քուշակեան երգերի հետ, բայց պնդել, թէ այդ երկուսից որն է սկզբնազրիւրը, ներկայումս ոլէտք է համարել դեռ վաղաժամ: Ապազայում գուցէ, երբ յայտնի կրդառնան քուշակեան այլ օրինակներ և կառաջադիմի մեր ժողովրդական երգի համեմատական ուսումնասութիւնը, այդ հարցին կարելի կը լինի մօտենալ: Ծամենայն դէպու այդ հարցը մեզ համար ունի երկրորդական նշանակութիւն: Բաւական է, որ այդ, իրանց տեսակին մէջ եղակի, երգերը հայ հանճարի արդիւնք են:

որ «բազմահայ» զիւղ մի է ի Տոսով պատառն Վասպուրականի, Արջակայ լճին արեւելեան եղբն և Նահապետ վարպետ աշուղին սեփական զիւղն է»։ Այդտեղ է նրա գերեզմանը, որը «ուխտատեղի համարուած է տեղացոցմէ» \*):

Ուրիշ ոչինչ չկայ յայտնի նըա մասին։

Սակայն Խըրիմեան Հայրիկ, որ տեսել է այդ գերեզմանը, պատմեց մեզ անձամբ նաև հետեւեալը \*\*)։

«Վանէն վեց ժամ հեռի՝ գեղի արեւելը՝ զիւղ մը կայ, Խարակոնիս կըսեն. զիւղին մէջն ալ եկեղեցի մը՝ սուրբ Քէոզորոս Եկեղեցուն հիմէն քիչ մը հեռի կը զանուի Քուշակին գերեզման, ուր զիւղացիներ ուխտ կերթան։ Մանուկ ժամանակ մենք շատ կերթայինք այդ զիւղ։ Այժմ չեմ յիշեր գերեզմանին արտաքին ձեր։

«Դիւղացի ծերունիներ կը պատմին, թէ զուարձան մարդ մը եղած է Քուշակ։ Մօսակայ դիւղերէն կըկանչեն եղեր զինքը հարսանիր։ Քուշակ ալ կառնէ եղեր իր քէման ու կերթայ։ Անզամ մըն ալ զիւղի մը շրնասած՝ զայլեր զինքն կըպաշարեն։ Քուշակ արագութեամբ կերնէ ծառին զլուխ և կընուազէ։ Դիւղացիներ կառնեն քէմանին ձալն և կըհասկան, որ Քուշակ եղեր է, Կերնեն, կըփնտռեն և կըզանեն զինքն, որ ելած ծառին մը զլուխ անուշ կընուազէ։ իսկ զայլեր՝ ծառին բոլորտիք շարուած՝ լուս մտիկ կընեն։ Է՞ն, ասանկ բաներ շատ կըպատմեն զիւղացիներ, բայց ասոնք բանաստեղծութիւն են... աւելացրեց Հայրիկ ժպառալով։ Ապա յանկարծակի ինձ զիմեց։

\* ) «Հայերք» երես Ժը.

\*\*) 10 զեկտեմբերի 1904 թ.

— «Պապիկ և թոռնիկ, կարդգանձ ես:

— Ո՞չ, վեհափառ:

— Ե՞ն, Զես կարդգանձ: Կարդմ. Քուշակիդ մասին քանի մը բան դրեր եմ անոր մէջ \*):

«Կըսատմեն նաև, շարունակեց Հայրիկ, թէ անզամ մը Քուշակ կը կանչէ զիւղացիներ. առակելնէ ո. Թէոդորոսին կատար և կըկանչէ. «այստեղէն ինքզինքս վար պիտի նետեմ, ուրոր իյնամ, այնտեղ թաղեցէք զիս: Գիւղացիներ մտիկ չեն ըներ, կըկարծեն թէ Քուշակ զուարճարանութիւն կընէ: Աակայն նա ինքզինքը վար կընետէ և կըմեռնի: Եւ Քուշակին գերեզման այդ օրէն ուխտատեղի մը եղած է զիւղացիներէ»:

Եթէ ժողովրդական այս կցկտուր յուշերի վրա աւելացնենք և այն, որ պ. Կոստանեան որոշ հաշտով դուրս է քերում Քուշակի ապրելու մօտաւոր ժամանակը, այսինքն Ժ. Պարի սկզբները, որանով սպառ-

\*) Յանկալի կըլինէր, որ Վանում ապրող որեւ ձեռնհաս անձ զնար Թարակոնիս և մանրամասնօրէն հաւաքէր այն բոլոր տեղեկութիւնները, որ պատմում է ժողովուրդը Քուշակի մասին և ուղարկէր մեզ: Յանկալի կըլինէր նկարագրել և նկարել նրա զերեզմանը:

Ինչ վերաբերում է Քուշակի ընդհարման դայերի հետ, այդ դէպքը Թրիմեան Հայրիկ իր «Պապիկ և թոռնիկի» մէջ վերագրում է աշուղ Մուշօին, որ «Զիշակին (Քուշակ) աշկերտ եղեր է»: Եթէ աշուղ Մուշօն իրական անձնաւուրութիւն չէ, այլ Քուշակի բանաստեղծական պատկերացումը, այն ժամանակի «Պապիկ և թոռնիկի» Մուշօին վերաբերեալ մասը ստանում է մեղ համար առանձին հետաքրքրութիւն:

ուսմ է այն ամենը, ինչ յայտնի է մեզ Քուչակի կեանքի մասին:

Սակայն եթէ Քուչակի կեանքի մասին այդքան քիչ գիտենք կաղմաւակի աղքիւրներից, նրա ներքին, հոգու աշխարհը — եթէ միայն նրան վերապրած երգերի հեղինակը իրօք նա է — իր ամբողջ յեղաշրջումներով բաց է մեր առաջ զեղարուեստական մերկութեամբ նրա ինքնահեղնող երգերում:

Քուչակեան ժողովածուն իր ամբողջութեամբ ներկայացնում է բաւականին ծանր մարսնելու նիւթ՝ նրա միջնադարեան խորթ գուտուարարբառը՝ համեմուած մեծաքանուակ պարսիկ-թուրք-արաբ բառերով. պատկերների, ձևերի, համեմատութիւնների յանախակի կրկնութիւնը. նրա խրատական մասի թուլութիւնը, տաղաչափութեան տաղտուկ միազանութիւնը, — այս բոլորը առաջին անգամից յետ են մզում ընթերցողին: Ահա թէ ինչով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ Քուչակի երգերը մեռմ են մինչև հիմա անծանօթ ոչ թէ միայն հասարակութեան լայն խաւերի, այլև զրական շրջանների մէջ, չընայելով, որ նրանք յայտնի են քսան տարուց աւելի: Բայց ընթերցողը թող զապէ իր անհամբերութիւնը, փոքրինչ ուսումնասիրէ նրանց լեզուն, ընտելահայ դարերով մեզանից հեռացած ոճին, աշխատէ թափանցել այդ երգերի միտքը և ահա հետզհետէ կըրբացունն նրա առաջ զեղարուեստական այնպիսի հրաշալիքներ, ուրոնց նմանը նա հայ բանաստեղծութեան մէջ ոչինչ չէ տեսել:

---

Ներկայ սործի նորատակն էր զուրս կորդել զիտնականների կոմքինստերից և նուիրել հայ հաստ-

բակութեան գրականական մի այնպիսի մարզարիտ, որ  
ամեն մի ժողովրդի պարծանք կարող է համարուել  
Մենք ընտրել ենք Քուչակի երգերից լաւագոյնները,  
մշակել նրանց, աշխատելով մօտեցնել մեր ժամա-  
նակի ճաշակին, ողունք Արոնել ենք նրանց մէջ ներ-  
քին կտոր և դասաւորել այնպէս, որ այդ կապը ա-  
ռանձնապէս աչքի ընկնի: Տաղաչափական մասի մէջ  
մենք մտցրել են բաղմաղանութիւնն, սակայն միքանի  
երգերում պահպանել ենք ոչ միայն Քուչակի տաղա-  
չափութիւնը, այլ և կրկնել ենք մինչև անդամ նրա  
յանդերը \*):

Մեր նպատակը չէր այս համառօտ առաջարա-  
նում տալ Քուչակի գրականական կերպարանքը. մեր  
աշխատութիւնը արդէն պարզում է մեր հայեացըը  
նրա մասին: Սակայն ընթերցողին ակնյայտ ծանո-  
թացնելու համար նրա ոճի, տաղաչափութեան և  
մասամբ մեր մշակման եղանակի հետ՝ առաջ ենք բհ-  
րում ընազրից երեք երգ.

1) Կանչեմ այս ծովիդ վրայ, ծովդ ի յակէն թանաք  
զառնայ.

Զինչ ի շամբ եղէք որ կայ, ամէնն ինձ զրիչ պի-  
տենայ.

Զինչ երէց ու խարեղայ դանուշման, որ զիր զիտենայ,  
Դրէ չկարնայ կարդալ, զինչ ի յիմ սիրտս կայ զուսայ:

(Տես երես 13.)

\*) Դրանք ցանկի մէջ շարուած են նօտր զրե-  
րով. զրանք և բովանդակութեան կողմից ընազրին  
ամենամօտ երգերն են:

2) Արեգակն ու լուսնիկան խմեցին ու եղան մայ-  
մուր,  
Առաւօտն ի վերայ երեկ, լոք եղան երկու թուրու-  
թուր,  
Աստղերդ ալ առաջ ելին, լուսնելին ասին. դուն ի  
լուր.  
Ասոր արեգակ ասեն, որ ցամէկ ի սար և ի բոլոր:

(Տես երես 61.)

3) Արծիւն ի յաւան ելեր ու կասէր թէ այդ ի՞նչ  
յաջապ էր,  
Թեզուր մ' յիշ թես ընկեր, նետ եղեր ու զիս կո-  
խոցէ:

(Տես երես 108.)

*U h p b p q b p*



Եթէ հրամայեմ անյատակ ծովին  
Եւ ծովը ամբողջ դառնայ ոև թանաք,  
Թէ յանկարծ զըրչի փոխուի լիովին  
Բոլոր շամրերի եղեղն անքանակ,

Օ՛, չեն բաւական սիրտըս պատառող  
Աէրն ու վըշտերը արտայայտելու.  
Բիւրաւոր զիտուն ճգնեն, չեն կարող  
Ինձ թափանցելու, սիրտըս կարդալու:

Երբ յայտընւեց սէրն երկըրում,  
Եկաւ, թափով սիրտըս թառեց,  
Եւ դուրս թըռաւ իմ երգերում,  
Արարաշիսարհ նա թափառեց:

Գըլուխս ելաւ նա չարաշուք,  
Բռնահարեց իմ ողջ ուղեղ.  
Աչրիցս ուղեց դառն արտասուք,  
Բայց նա թափեց արեան հեղեղ:

Ինչու համար մայրըս բերեց ինձ աշխարհ,  
Այս սառն աշխարհ, օտար աշխարհ, ցաւա-  
հար.

Ծընեց նա ինձ սիրու զերի մոլեգին,  
Եւ սիրու մէջ դուրս է զալի իմ հողին:

Ասում եմ. «Ճայր, օգնիր, մեռայ անձարակ»:  
Նա ասում է. «թող մեռնես, փուչ, անա-  
ռակ»:—

Օհ, տէր Աստուած, այս ինչ կեանք է, պա-  
տռնաս.


Մայրն ուզում է իր որդուն մահ վաղահաս:

Աչքերըդ են ծով-հրաշալիք,  
Որ Մսրայ ափն է քերում.  
Վարսերըդ են ալիք-ալիք,  
Որ քամին է երերում:

Վեր ես վազել, այ ուռու ծառ,  
Կարմիր խնձոր, բոլորել.  
Հազարվարդ ես վառ ու պայծառ,  
Հոտդ է աշխարհ մոլորել:

Երկու մարդ կան խղճալու,  
Լոկ խղճալու և լալու.  
Մէկն է անկհղծ սիրողը,  
Մէկն է հոգին տըւողը.

Հ 5783



Երնէկ ես փոքրիկ ծիծեռնակ լինեմ,  
 Զարդախիղ զլխին բունըս կը շինեմ.  
 Երբ ծաղի արև  
 կը թռչեմ վերհ  
 Մէրըս երգելու,  
 Դեռ չը մթնացած  
 կը թռչեմ ես ցած  
 Ծոցըդ պառկելու:

Երնէկ ես լինեմ մետաքսի զօտի,  
 Մէջքըդ կը փարեմ,  
 Կամ ոսկէ կոճակ քո բըզի մօտի՝  
 Ճըտիդ կը յարեմ:

Երնէկ ես լինեմ ալ զինի նըռան.  
 Երբ զաւը զինով զու տանես բերան,  
 Վազէ վազ կը զամ,  
 Դընչիդ պաչ կը տամ:

Արե զախչում է սարից—  
Ահա ծաղեց իմ լուսին.  
Նա դառնում է աղբիւրից,  
Կարմըրում է կուժն ուսին:

Տերեի տակ կոլորակ  
Հասած խնձորն օրօրաց.  
Եարիս ծիծը խոտորակ  
Շըմաթի տակ շորորաց...

Աիրում եմ քեզ մաքուր սիրով, մշտավառ,  
 Զը կայ ոչինչ քո վարկից թանգ ինձ համար.  
 Այն օրից, ինչ արև շողաց իմ զլխին,  
 Քեզանից զատ ես չեմ սիրել ոչ մի կին:  
 Դու մի կարծիր կիրքն է դէպի քեզ քաշում,  
 Թէ աղբիւրի ջըրի ծարաւն է մաշում.  
 Հաւատա, եար, նոր եմ դառնում ես զետից...  
 Ես մաշւում եմ լոկ քո տեսի կարօտից:  
 Կարո՞ղ էիր երբեկցէ դու կարծել,  
 Թէ որչափ ինձ անհրաժեշտ ես դու դարձել.  
 Նայիր դէմքիս, թօշնեց թըշիս ալ վարդը,  
 Այստեղ զըցեց ինձ տառապանքն ու դարդը  
 Այս, երգս էր մի անխոհեմ, անփոյթ երգ,  
 Բայց դըրա տեղ դու ինձ տըւիր շատ խոր  
 վէրը.  
 Ներիր ինձ, եար, ներիր, իմ եար քաղց-  
 բագին,  
 Զէ որ սէրըդ խելք չէ թողել իմ զլխին

Սիրտըս դարձել է մի մանուկ լալեան,  
Զուր եմ խարխըրում նըրան շաքարով.  
Նա լալիս է միշտ, անժւշ սիրեկան,  
Եւ քեզ է ուզում օր ու գիշերով:  
Ես նըրան ի՞նչ ճար անեմ:

Ի՞նչքան աշխարհում սիրուններ որ կան,  
Ցոյց տրւի աչքիս, զուր եմ համոզում.  
Քեզանից բացի, անժւշ սիրեկան,  
Մա ուրիշ ոչոք, ոչոք չէ ուզում:  
Ես նըրան ի՞նչ ճար անեմ:

Լուսաղէմին՝ առուածորից  
 Աղջըկերքն են կչկըչում.  
 Սիրեկանըս էն բոլորից  
 Անուշիկ էր բրգըջում:

Երնէկ, ով էս լուսաբացին  
 Քաղցր քընից նոր զարթնում,  
 Պինդ կըպել է հարի ծոցին,  
 Պաչ է տալի, պաչ առնում:

Կարմիր վարդ կանաչ թփով, կանաչ թռւի  
կարմիր խնձորով,  
Բանի լամ ու քեզ ուղեմ, արթնանամ հոգոց  
հանելով.

Եթէ սիրում ես անկեղծ, ասա, լի եմ քո  
կարօտով,  
Եթէ անկեղծ չես սիրում, Սուրբ Սարգիս,  
Աստուած քեզ խոնվ:

Վաղուցուան իմ սէր, առաջին իմ յոյդ,  
իմ վառ արհեգակ, իմ վեհ տիեզերք,  
Մանկութեան օրից փայփայած իմ յոյս,  
Մի տար իմ սրտին այդքան խորը վէրք:

Թէ չէ սև հաղած, խելազարի պէս  
Սև սարեր կընկնեմ աչքիս արտասուք.  
Հէյ եար, անողորմ, իմ օրըն ընկնես—  
Բաղդիցըդ մոլոր, սիրտըդ սև ու սուզ:

Մէկ մարդ ձեռին փայտահատ  
վարդենու տակն էր փորբուժ,  
Երգիչ սոխակն յուսահատ  
իր վիզն առաջ էր բերուժ:

Ես աչք, դու լուս, այ հոգի,  
 Զէ՞ որ անլուս աչքն է կուր.  
 Ես ձուկ, դու ջուր, ջան հոգի,  
 Աշխ, սնց ապրի ձուկն անջուր:

Չըկան ջուրը թէ փոխես,  
 Կապրի նորում նա աղատ,  
 Բայց բաժանեն ինձ ու քեզ,  
 Ճար չը կայ ինձ մահից զատ:

«Ես եմ կարծըք»

Քարի նըման, որին դալար չի բռւսնի.

«Ես եմ բարձըք»

Ամպի նըման, որին մարդը չի հասնի:

«Ի՞նձ գերողն է»

Քաջ նետածիդ, անյաղթելի դիւցազուն.

«Ի՞նձ սիրողն է»

Դեհ ու չքնաղ, անզուզական սիրասունք:

Պատկերիդ առաջ փարոս վառելով՝  
Խնձ քո կախ սրգիչ լուսն հրապուրեցիր,  
Եւ քեզ դիմեցի ծով պատառելով,  
Բայց յանկարծ իմ դէմ լուսը մարեցիր:

Ո՞ւր են խոստումներ թովիչ, անհամար,  
Ո՞ւր ցնդեց, անդութ, քո տըւած յոյսը.  
Միթէ ինձ ուժից զըցելու համար  
Միայն փալփըւաց խարուսիկ լոյսը:

Եար, քո սէրը արիւն դառած՝  
Երակներիս մէջ լուծուեց.  
Չընաղ անձըդ միատարած  
Տանջուած հոգուս մէջ ծըծուեց:

Կուղեմ սրտիս դանակլ զարկեմ,  
Ասեմ «արիւն, դուրս արի».—  
Մարդ ո՞նց քաշէ ձեռն իրա դէմ.  
Ասէ՝ «հոգի, դուրս արի»:

«Հեռացիր, զընա, --ինձ կրկնում էի, --  
Գուցէ մեղմանայ սըրտիդ հընոցը»,  
Բայց որքան հեռու հեռանում էի,  
Աւժգին և ուժգին բորբոքուեց բոցը:

ՀԵՅ սառը մարդիկ, թէ կուզեք կըրակ,  
Եկէք, իմ սըրտից տարէք, վառեցէք,  
Իսկ թէ իմ ցաւին տալ կուզեք ճարակ,  
Ինձ ամրող առէք, կրակում այրեցէք:

Եար, անգութ, յամառ,  
Մեռնեմ քեզ համար.

Դու ծամբը կտրես  
Եւ այն ջահ առած  
Եւ ձեռիդ վառած  
Շրջես ինձ պտրես:

Գաս իւ շիրմի տես,  
Արցունքներ վիթես.

Ասես՝ «ախ, ուր հայ.  
Թռւմբըս զրկելով,  
Գլխիդ զարկելով  
Վէմբս համբուրես:

Լալիս էի դառնահառաչ,  
Արիւն եկաւ իմ կրծքից.  
Հառաչս անցաւ Տիրոջ առաջ  
Եւ... ձիւն տեղաց երկնքից:

Ո՞վ է տեսել, որ շող ամառ  
Զիւն պատանու զլիսին գայ.  
Արդեօք ձիւնն էր լոկ ինձ համար,  
Թէ ամենքի համար կայ:

Բարակ մէջք ու թուլ զօտի, բո տիրոջ ես  
 լաւ զիտէի.  
 Բո տէրն աղքատ պիտի լինէր, ես հարուստ,  
 որ քեզ գնէի.  
 Բո զինն է հազար մարի, ես հազար կըտամ  
 աւելի,  
 Աւելին էնդուր կը տամ, որ երեսն երեք  
 ծին ունի.  
 Ամեն մէկը զոհար արժէ, զիրկ ու ծոց մէկ  
 պաչ աւելի:

Քո սիրուց ինչպէս աշնան չոր տերե  
 Սիրտըս է դողում.  
 Երեսիցս ինչպէս գարնան յորդ անձրե  
 Արցունք է ցօղում:

Այ իմ սիրուն, հազար սիրուն,  
Դրախտի խնձոր, աղուշ-մաղուշ,  
Այ եղեղնի շաքար ծորուն,  
Բայց նըրանից քաղցր ու անուշ:

Սիրուններում ընտիր սիրուն,  
Ի՞նչ լաւ Աստուած է քեզ գըծել.  
Կաթնով շաղուած են մոլորուն  
Քո թաղցըրած շամամ ծըծեր:

Եար, կը մեռնես—կը գայ օրը—  
Ծոցըդ երկինք չես զրկելու.—  
Ճիճուն կուտէ այդ բոլորը,  
Միթէ ինձ ես լոկ զրկելու:

Զարթիր, իմ եար, անուշ քընած դու կըտրին,  
 Զարթիր, ծոցըդ լուս է տալիս աստղերին.  
     Կամ առ ինձ քո ծոցը քուն,  
     Կամ թէ թող ինձ գընամ տուն:

—Ոչ քեզ կառնեմ ծոցըս քուն,  
 Ոչ կը թողնեմ գընաս տուն.  
 Մինչ արել ծագի սարից շողալով,  
 Պիտի պահեմ այդակս ինձ մօտ դողալով...

**Գունատել** եմ ինուկի նման, դեղնել եմ ինչ-  
 պէս զափրան.  
**Արդեօք** ոռ սէրն ինձ այդ արաւ, թէ՞ հա-  
 սաւ օրըս մահուան  
**Կու**, որ դեղը ունես, տուր ինձ, որ  
 կենդանանամ,  
**Ասլա** թէ՞ ոչ կը մեռնեմ, քեզ կանուանեն  
 «մարդասպան»:

Խնչպէս մի քաղցած մանուկ դեռածին  
Փափազում է իր մեռած մօր ծըծին,  
Ծիծն է դնչիկով զուր բոնել ճգնում,  
Ես քեզ եմ սպարում, քայց քեզ չեմ զտնու-

Զուր հասցրու լերդիս, հիւծուեց ծարաւի  
Այրուեցայ, հասիր, եար, սիրուդ բովից.  
Զայն տուր մեռնողիս, ձայն—հաղորդ վերջի  
Աշ հասիր, հասիր իմ յետին շնչին,

Մէկ եղջերու սառն աղբիւրի  
 Զուրն էր խըմում խուլ մորում.  
 Եւ տեսաւ շուքն իր եղջիւրի  
 Այն աղբիւրի ջինջ խորում:

Երկար, երկար նայեց բիւրեղ  
 Զըրի խորումն անսասան,  
 Ապա կանչեց. «Ի՞նձ պէս զօրնղ  
 Դեռ չէ եղել այլ դազան:

«Ես անառիկ Անտիռքիան  
 Այս եղջիւրով կաւերեմ,  
 Նըրա զօրքեր, զէնք ու ձիան  
 Մէկ հարուածից կը զերեմ»:

Եւ նա տեսաւ իրան առաջ  
 Առիւծ ահեղ ու վայրագ.—  
 Լեղապատառ, լալաբառաչ  
 Փախաւ քամուց էլ արագ:

Բայց անտառում յանկարծ ծառից  
 Եղջիւրը նրան բնեռեց:—  
 Նա մահն առաւ այն պատճառից,  
 Ինչի վըրա յոյս դըրեց...

ի՞նձ աւետեցին մահճի մէջ լալիս.  
 «Քո սիրած եարը քեզ այց է գալիս»:  
 վերկենամ մահճից, խեղդեմ իմ հառաչ,  
 Ռւրախ երեսով դուրս գամ ընդառաջ:

Պաշեմ այն դէմքը խանդաղատագին,  
 Որի մօտ աշխարհ չունի ոչ մի զին.  
 Նրա ոտի փոշին հաւաքեմ մէկ տեղ,  
 Լացից կուրացող աշքերիս տամ տեղ:

Էն մի պաշը, որ ինձ տըւիր վերջաղէս  
 Քո բերանով, սրտի կամով ու տաք-տաք,  
 Զէ պարզեել անուշ պըտուղ նըրա պէս  
 Տիեզերքի գեռ ոչ մի ծով, ոչ ցամաք:

Նա անուշ էր դրախտի տըւած էն պաղից,  
 Որ վիճակուեց մեր նախահայր Աղամին.  
 Նա ուտելուց թէպէտ զրկուեց սուրբ տեղից,  
 Բայց մինչև մահ կարօտ մընաց էն համին:

Թուխ աչք ու թուխ ռւնք ռւնես, մհանեն  
 էդ թուխ խոպոպին.  
 Լալկես, եարջան, թէ չը զաս հէնց էս զի-  
 շեր իս մօտին.  
 Օ՛, եթէ զաս, եար, ինձ մօտ, երեսդ երե-  
 սիս կառնեմ,  
 Երեսդ առած երեսիս շունչըս շնչիդ հե-  
 խառնեմ:

Երկարիր գիշեր, մեծ տարի դարձիր,  
 Դաժան, սև խաւար, իջիր, թանձրացիր,  
 Իմ մուրազն առայ այսօր իրիկուն –  
 Վերջապէս եկաւ հիւր եարըս թաղուն:

Եօթ սարի յետե կանգնիր, արշալոյս,  
 Թէ չէ կը փախցնէ սիրածիս բո լոյս.  
 Թող յաւէտ այսպէս խաւարում մընամ,  
 Միայն եարըս միշտ կրծքիս ունենամ:

Սիրտըս երկու դուռն ունի,  
 Մէկը զաղա ու միւսը յայտ.  
 Դաղտից եւայ գողունի  
 Եւ զտայ զուտ ոսկու հատ:

Այն ոսկին, որ ձեռս առայ,  
 Դեռ ոսկերիչ չէր տեսել,  
 Ոչ մըտել էր զեռ քուռա,  
 Ոչ մուրճի ձայն էր լըսել...

Առխակը այսում՝ վարդենուն թառած՝  
Երգեց սիրայոյդ,  
Երգեց հրաշալի, Երգեց, թռվըուաց  
Մինչև արշալոյս:

Փըշերի միջից վարդիկը սուտքուն՝  
Լըսում էր լըսիկ.  
Ճըղեց իր կանաչ շապիկը թագուն,  
Հագաւ կարմըրիկ:

ՀԵՅ, մի պարծենար, լուսին երերուն,  
թէ սիրուն քեզ պէս ոչ-ոք չէ շողում.  
Երկրի լուսինը՝ քեզանից սիրուն,  
թւուշ թշնիս կըպած կըծքիս է դողում:

Լուսին, մի ժպտար կասկածով այդպէս,  
եթէ ոչ կարսո իը գըցեմ ուսից,—  
վախում եմ, սիրես դու էլ խենթի պէս,  
Խաւարես, զրկես աշխարհը լուսից:

վաղ-վաղ քընից վերկացայ, որ պնամ, եա-  
 րիս տառ բարե.  
 Եարըս ինքը դէմս ելաւ, իր երեսն էր վարդ  
     ու տերեւ—  
 Վարդը լաւ լազաթ ունի, երբ ծէզին դիս-  
     չում է արե.  
 Իր կանանչ կարան հանում, կարմիրը հազ-  
     նում է վերեւ:

Աստուածածնի սուրբ կիրակի  
Արել դեռ չէր ծագել,  
Գեղեցկուհին իջաւ այգի,  
Կանաչ-կարմիրն էր հագել.

Եւ մանրաքայլ, յուշիկ-յուշիկ  
Պատրուսենին նա անցաւ,  
Քաղեց խաղող-մեղր անուշիկ,  
Շար շըմաթի մէջն ածաւ:

Բայց շըմաթը վեր քաշելիս,  
Նըրա տակից լուս ցօղաց—  
Արև չը կայ, մէզն է լալիս,  
Ինչու այգին շողշողաց...

Խսկ խաղողը—այ դաւաճան—  
Խայտաց ծոցում խենթի պէս,  
Լեզու առաւ, կանչեց՝ «Ճան, Ճան,  
Մուրազս առայ վերջապէս:

Լաւ է մի ժամ ինձ այս անուշ  
Ծոցում քաղցըր տըրորուել,  
Քան մայր-ճիւղիս վըրա մուշ-մուշ  
Տարիներով օրօրուել:

Եւ սիրեկանի կարօտից տարուած՝  
Տսայ փողոցում նըրան իմ դիմաց,  
Ծով-ծով աչքերը գետին խոնարհած,  
Շինած, ամօթխած բարեկց կամաց:

Եւ իւչպէս շոգում՝ սառը ազրիւրին  
Հանդլպի յանկարծ ծարաւած ճամփորդ,  
Հըպի քթունքով կենսարար ջըրին  
Եւ ծըծէ աղան այն ջըրից յորդ-յորդ,

Ես խենթի նըման եարիս զրկելով՝  
Դինդ-պինդ պաշեցի աչքերը խորին.  
Վայ ինձ—սա գընաց լալով, կըկնելով՝  
«Խայտառակ եղայ օրը կէսօրին»:

Երնէկ նըրան, ով ունի երկու հատ եա  
 խորոտիկ  
 Երկուսն էլ նոր ձեռք բերած, երկուսի դուռն  
 էլ մօսիկ.  
 Դադ առաւօտ վերկենայ, զոյզ բարե ոայ  
 Երկուսին,  
 Զեռը զըցէ ճըտերին, սլաչ տայ մէկին ու  
 միւսին:

Եւ տեսայ մէկ զեղեցկունի, ձայն տըւի. «Այս  
սիրուներեսաւ  
Դադաւ և ինձ պատախանեց. Իհա սիրուն  
եմ, բայց զու ուր ես.  
Ասոււած երես ինձ պարզեց, քեզ՝ աչքեր,  
որ ինձ սնենես.  
Ինձ պարզեց զեղեցկութիւն, քեզ՝ սիրու-  
կըրակ որ քեզ էրեսաւ

Երեկ ես տեսայ մէկ տանու կաքաւ,  
Երեկուանից դէս խելքըս վրէս չեկաւ.  
Էլ մէկ ուրիշ եար նըրա տէրն ի՞նչ կանի:  
Ա՛յս, նըրա տիրոջ հազար երանի:

Դեռ նըրա նման չընաղ արարած  
Այս աշխարհի մէջ մայրը չէ ծընած.  
Նա որ սառն, անշունչ դիակ ծոցն առնի,  
Կը շընչի դիակն, իսկոյն կը յառնի:

Ուր էիր դու, անյայտ էակ,  
Երևեցար, գերեցիր.

Ամբողջապէս ինքըդ կըրակ,  
Կրակ թափեցիր, էրեցիր:

Եւ քո սէրը ոսկիացրիր,  
Սրտիս հնոցում հալեցիր,  
Իսկ էն ոսկին շղթայ դարձրիր  
Եւ սիրտըս քեզ կալեցիր:

Շնչում է ինձ նախաղգացում—վախենում եմ  
 սկ միտք-զեխց.  
 Եոր եմ սիրել, ինձ թըւում է, որ կը զրկեն  
 իմ արևից.  
 Օ՛, թէ զրկեն ինձ արևից, թող աշխարհից  
 սէրը հանեն,  
 թէ աշխարհից սէրը հանեն, թող աչքերի-  
 լուսը տանեն

Ես թռչուն էի ազատ ու թեթև,  
Ճախրող երկնի մօտ, ամպերի յետև.  
Ես չէի առնում կուտ գետնից երբէք,  
Որ չընկնեմ սիրու թակարդ կենսարեկ:

Բայց իմ թակարդը ծովումն էր լարուած.  
Եւ ես մէջն ընկայ յանկարծ մոլորուած,  
Ոչ ոտով ամին թռչունների պէս,  
Այլ ոտով և զոյգ թեով հիմնապէս:

Ինձ սիրում են երկու եար,  
Ո՞րին ընտրեմ ինձ համար.  
Մէկն է լուսին՝ նազ, քնքուշ,  
Մէկն՝ արև տաք, փաղաքուշ:

Լուսին, զու միշտ փակ, խըռով,  
Միշտ ամպոտ ես, անզորով.  
Քեզ կը սիրեմ, արեջան,  
Միշտ կենսավառ, սիրաջան:

Ես մի վայրի վարուժան՝  
Կուզեմ ազատ ստուանել,  
Վեհ ամսղերից անբաժան  
Երամներին ինձ խառնել:

Ոսկէ վանդակ որ շինես,  
Չես կարող ինձ էլ զերել.  
Աշխարհ միջնորդ էլ անես  
Էլ չես կարող ցած բերել:

Խ՞նչ էք բամբասում. ի՞նչ մեղք եմ արել.  
Ես լոկ մի չընադ էակ իմ սիրել:

Բայց զիտեմ, եռբէք դուք չէք դադարի.  
Բամբասելը ձեզ հաճոյք է տալի.  
Ուրեմըն ձեզ տամ հաճոյք կրկնակի,  
Այս զիշեր թող ձեր աշքը չը փակի:—

Դէհ, բամբասեցէք. նոր մեղք եմ արել.  
Ես մի այլ չընադ էակ եմ սիրել:

Երես ունես՝ լուսին բոլոր,  
Աև խոպոսիներ՝ գիշեր խոլոր,  
Այտերըդ՝ զոյզ դրախտախնձոր,  
Աչքերըդ՝ ծով խորհրդազօր:

Ունքեր ունես՝ աղեղ լարած,  
Թարթիչներըդ՝ նետ սիրասլաց,  
Բացուած կակաչ՝ փոքրիկ բերան,  
Մարզարիտէ մէջը շարան:

Այլ մեր թաղի նոր բընտկիչ, իմ աննըստան  
 նոնախալաս,  
 Եկար, նոր սէր բերիր քեզ հետ և զըցեցիր  
 կրակը վըրաս.  
 Աղաչուժ եմ ես Աստըծուն, երբոր եկար  
 շերթաս էլ յետ  
 Դընեմ երես քո երեսին, որ մոռանաս եկաւ  
 ճամփէդ:

Լուսնի մէջ ու արեի  
 Մէկ օր ծագեց թունդ կըռիւ  
 (Կոնծել էին երեի),  
 Եւ աստղերը՝ ցանցըրիւ  
 Տժգուն երկնի երեսին.  
 Ուզեցին նրանց խաղաղել,  
 Թէ՞ «քո բան չէ, այ լուսին,  
 Արեի դէմ կոիւ մըղել»:

Տիրեց լուսին, դալկացաւ,  
 Փախուստ տըւեց դողալով.  
 Ծագեց արեն ու անցաւ  
 Արեելքից շողալով:

Այ կարմիր ու ձերմակերես,  
Ախըր, մինչև Երբ ինձ էրես,  
Մէջլիս նստած՝ յանդերով  
Յետըս խօսես ունքերով։

Ծոցըդ դիտմամբ յետ ես անում,  
Ես բերանիս ջուրը տանում:  
Ուր կորչեմ ես, ուր գնամ,  
Թէ ծոցիցըդ զուրկ մընամ։

Քո ստեղծածին, Տէր զըթած, սիրու ճանգը չը  
զըցես,  
թէ սիրու ճանգ նա ընկաւ, լեզու, նըրան  
չը կըծես.  
Աէրը խեղձին խենթացրեց, նըրան շինեց  
կապելու:  
Ով չողորմի սիրողին, նա չար մարդ է,  
ատելու:

---

Ով չողորմի սիրողին, դառնայ խաղք ու  
խայտառակ.  
Ուը ձըզէ մորու մէջ զուրկ ճաշակից, ան-  
ճարակ.  
Կապեն պատանքն օձերը. գորտ-տիրացուն  
կոկըռայ.  
Կուանչէ ճայեկ-աբեղան, տէր ազռաւը  
դողըռայ.  
Աղուէսն էլ զայ կընձալով, ինչպէս լալկան  
փառահեղ.  
Մատադ լինի չաղալը, ցնցէ պոչը մոմի  
տեղ...

Եւմ եար, քեզ զիբ եմ զրկել, կարդա՞ մէջ  
ինչ է զըրած.  
Գիրկուծոց եմ ողջ զըրել, մէջէմէջ պահե  
կարօտած.  
Այ իմ նոր սիրուն սիրած, նոր, սիրուն  
սրտով հաւանած,  
Առած ու սիրով տարած, ծոցին մէկ տէր և  
զըրած.  
Քո ծոցն է լուսով լցրած, քեզ պէսն երրէ  
չէ ծընած.  
Աշխարհս օրինակ արած՝ քեզ պէսն երրէք  
գտած.  
Եւմ եար, քեզ զիբ եմ զրկել, կարդա՞ մէջ  
ինչ է զըրած.  
Գիրկուծոց իմ ողջ զըրել, մէջէմէջ պահե  
կարօտած:

Մնուելուս օրից մինչև հիմա դեռ  
Չէ խոստովանել ինձ ոչ մի տէրտէր.  
Հէնց որտեղ տէրտէր ես աչք եմ ածել,  
Շեղել եմ ճամփիկս ու թաղ եմ կացել:

Բայց երբ տեսնում եմ մի կին զեղաղէմ,  
Գըժի պէս իսկոյն հէնց վազում եմ դէմ.  
Նըրա ծոցն եմ ինձ ես տաճար անում.  
Նըրա ծըծերին եմ խոստովանում:

Աչքը սրտիս մէկ անզամ  
Առաց. «Եյ դու, անզգամ,  
Քեզ տըւել ես սիրուն միշտ,  
Մոռացել ես հոգս ու վիշտ—  
Ես, այդ բանի մէջ անմեղ,  
Անիծւում եմ զուր բո տեղ»:

Սիրտը պատասխան արաւ.  
«Եի զրպարտիր, անիրաւ,  
Զուր ես անմեղ ձեանում.  
Աչքը ում չէ հաւանում,  
Նըրան սիրտը չի ուզի,  
Ինչըան լեզուն համոզի»:

Իմ հարը հօրանց տանից ելաւ ինչպէս նաւը  
ծովից.  
Հաղել է կանաչ ջուրը էն, քաշել զլխակի  
վրայից.  
Նըրա շունչն է այն մշկից, որ հանած է  
ամբարիից,  
Երեսն է այն դռւմաշի պէս, որ հանած է  
ֆրանգի երկրից:

Կանաչ-կարմիր քո վըրբան՝  
 Նըման ևս կտրած նըռան,  
 Հիանում ևմ քեզանով,  
 Երբ կանդնած ևս ձեր դըռան:

Դուռն էլ կիսատ ևս բանում,  
 Աչք ու ունքով ևս անում,  
 Մեռնեմ սիրուն ժպտալուդ,  
 Որ տըխմար խելքս է առնում:

—Այդ ազ է, որ երդիկին  
Ումն է զալի մեր զլխին.  
Թէ իմ վարդն ես՝ ցած թըսիր,  
Թէ այլ ծաղիկ՝ գնա կորիր:

—Ես բռնը չեմ՝ ցած թոչեմ,  
Ոչ օտար հմ՝ զնամ կորչեմ.  
Եկայ քեզնով հիացած,  
Թոյլ տուր, վերից նոյեմ ցած:

Ես շատ ու շատ յիմարացայ,  
 Երբ սիրեցի օձի ձագը,  
 Երբ ես այնքան վստահացայ,  
 Այցելեցի օձի ծակը!—

Օձամայրը վազեց առաջ,  
 Կըծեց և ես դառը լացի...  
 Տեղն էր, տեղն իմ լացն ու հառաչ  
 Ի՞նչ իմ բանն էր՝ օձ սիրեցի:

Եղատիր, Աստուած, մարդու չարիբից քո  
 արարածին.  
 Մարդն է սոսկալի, նա շղթայ դըրեց ան-  
 յաղթ առիւծին.  
 Եւ չէ սիրու անուստ գիւղին մօտենալ արծիւը  
 ահից,  
 Իսկ սատանայի թողն անդամ կորաւ վաղուց  
 աշխարհից:

Եարիս տեսայ, շաւիզով ցած էր զընուժ.  
Գընուժ էր նա, տեղ-տեղ քաղուժ նուն  
ֆար,  
Տեղ-տեղ կանգնուժ, ծաղիկն աչքին  
զընուժ  
եւ լալիս էր, հեկեկուժ էր վշտահար:—

Այս, կուրանաս դու, չար ուզող հարազա  
Ռը պահուժ ես երկու սիրող սիրու անջաւ

Հերիք տանջուկցանք, կարօտ սիրելան.  
Կորիք ըստ շղթան ծանըր, ստըրկային,  
Էլ մի տատանուիր — հերիք է այսքան  
Սարսափով նայենք մենք ապագային:

Փախչենք այլ աշխարհ երջանիկ, ազատ,  
Ար սէրնու կեանքը ծաղկուժ են, աճուժ. —  
Այս խեղղիչ օդում՝ ստըրկին հարազատ՝  
Սղատ մարդ, կարծիք էլ չեն ճանաչուժ:

Թողէք, որ զոռամ, զոռամ աշքաբա,  
 Թող աշխարհ ցնցուի իմ աղաղակից.  
 «Հէյ բրիստոնեայ մարդ, խելքը գլուխոդ արա  
 Զգուշացիք սիրու ահեղ կըրակից»:  
 Աէրն է աւազակ, անսիրտ, մոլեգին,  
 Աւազակ է նա, ձեռն ու ոտ ունի,  
 Բայց դուք նայեցէք էն աւազակին,  
 Նետ չունի ձեռին, խըփի, սըպանի:  
 Վայ, կամաց-կամաց իմ ջանը մըտած՝  
 Առանց Գըրողի հոգիս է հանում.  
 Զեմ ուզում գընալ, փողպատըս չաթած՝  
 Անսիրտն, անհոգին զօրով է տանում:

Քո սէրն է պահուած անտակ ծովի սէջ  
 եւ դաժան ալիք պահապան դըրած,  
 Բայց ես կը կռւեմ, կը կռւեմ անվերջ  
 Յորձանքների հետ գլխից ձեռն առած:

Այնքան կը սուզուեմ, այնքան խորանամ,  
 Մինչ սէրըդ կորզեմ, սիրուդ տիրանամ:

Թոյլ տուր մտնեմ, խնձոր քաղեմ,  
Ծոցը—դրբախտն Եղեմական,  
Ծըծերիդ մէջ զլուխըս պահեմ,  
Քընեմ քընով անմահական:

Քո շրթունքից ծըծեմ զի՞նի,  
Ծըծեմ, հարրեմ, ինձ մոռանամ,  
Յետոյ թող զայ Դրոզն ինձ տանի,  
Դժոխը թէկուզ յետոյ զընամ:

Բայց ի՞նչ անեմ, եար, ախ ու վախ,  
Աւրիշինն ես, ով ի՞նչ կասի:

—Տո, մի նայիր, մըտիր անվախ,  
Լեզուն չորսայ, ով բամբասի...

Այս առաջնական գործությունները պահած վարդիկ, ոսկե սինու  
վըրա դրուած,  
Եկայ առնեմ քո բուրժուանքը անուշ բոյրից  
ևս հրապուրուած.  
Բայց քո մայրը խանգարեց ինձ, թող Գլըրու-  
զը տանի նըրան.  
Ինչ աշխարհում քահանայ կայ, նրան անի-  
ծեն միարեան:

Երանի՛ նըրան,

Ով իր եարն տուաւ,  
 Կամուրջ դուրս տարաւ.  
 Դետը վարարեց,  
 Կամուրջը վարեց,  
 Զիւն յանկարծ բրթեց,  
 Յետքերը հարթեց...

Իսկ նա ծաղկոցում  
 Եարն առել ծոցում՝  
 Ժպտում թուխ աչին,  
 Պաչ տալիս պաչին,  
 Գրկում տենչահար,  
 Ծաղրում է աշխարհ...,

Երանի՛ նըրան:

Երկու ախոյեան մըզում են մըցում  
ինձ ենթարկելու—հողը և հոգին.  
Մերթ հոգուց տարուած ես վեր եմ թռչում,  
Մերթ մօտենում եմ ինձ քաշող հողին:

Որի՞ն հաւատամ, թէ հողին կպչեմ,  
իմ հոգու լուսը պիտի պակասի.  
Բայց, ախ, հոգու հետ ուր պիտի թռչեմ,  
Ուր է նա տանում—արդեօք ով կասի:

Օրհնըւի քեզ ծընող մայրը, որ քեզ պէսի.  
աշխարհն բերեց,  
Բայց ի՞նչու նոր բերելուց յետ աշխարհն այրել  
քեզ պատուիրեց:—  
Ո՞ւ, երկընըից կըրակ թափուի, մօրըդ այրէ  
ամբողջովին,  
Որ զատում է քեզ ինձանից և մերժում է  
ինձ լիովին:

Դու աշխարհի մատանին ես՝ տկը վըրան.  
Դու աղքիւրի գալորին ես՝ շաղը վըրան.  
Դու ինձոք ես թաւ սաղարթից թաղուն  
նայող...

Դուրս եկայ ես զիշերով,  
 Որ ճարեմ մէկ հար սիրով.  
 Գըրող տեսայ՝ մահագոյն—  
 Աչքով արաւ ինձ իսկոյն:

—Գըրող, մատաղ, մի նայիր,  
 Ես ջահել եմ, խընայիր,  
 Արի ցոյց տամ տանելուն,  
 Վըզակոթին թակելուն:

Չեսին ունի ծիրանի  
 Անուշաբոյք գլուխ-զինի,  
 Ինքը անուշ չէ անուժ,  
 Ոչ ուրիշին զիջանուժ:

իմ նունովար - ջըրի զերի,  
 Որ ծաղկել ես ջըրի միջում,  
 Ջըրի ափից՝ ինչպէս ուսի՞  
 Քեզ եմ նայում ու դողդոջում:

Օ՛, կը կըտրեմ ես բո ջուրը,  
 Որ դարձգ վեր զու ցածաքս,  
 Բանամ աշրիս յորդ ազրիւրը,  
 Քեզ ջըրեմ, որ նորից ծաղկես:

Ես ըլնած էի. խաղաղ ու յատակ  
 Գիշերն էր լրռած.  
 Սոխակը երգեց և սիրալս--ի իք-թար-  
 Յանկարծ թրթընաց:—  
 Ենձ թըւաց թէ նա ըերանն էր զըրել  
 Իմ հարի լեզուն.—  
 Ոյն օտար թըռչնին ով էր թելադրել  
 Փափաղս անխօսուն:

Մաքուր սրտով, մըտորուն  
 Դաշտիցը տուն դառնալիս՝  
 Յանկարծ տհսայ վառվըուն  
 Արեգակի պէս եարիս:  
 Իսկոյն անցաւ իմ մաքով.  
 «Արի, սըրան տամ մի պաչ»,  
 Հայց նա սաստեց ինձ ունքով,  
 Խորհրդաւոր շըշընջաց.

«Մեր տուն կը դաս, երբ մթնի,—  
 Հայրըս ժամ է զընալու,  
 Մայրըս էլ տուն չի մտնի,  
 Հիւր է այսօր մընալու:  
 Հէնց որ անցար զըռան շէմ՝  
 Իմ ծոցը քեղ կը բանամ,  
 Էնքան պաչեմ, պաչպըչեմ,  
 Որ վերջապէս կշտանամ»:

Աշխարհ՝ աշխարհ ման եկայ, հոգիջան, էլ  
տեղ չը մընաց.  
Ասի՝ դանեմ այնպիսի եար, հոգիջան, որ  
դեռ չէ սիրած:  
Բայց այնպիսուն հանողիալեցի, — համ սիրած  
է, համ թողնըւած...  
Էլ ինչու էր այսքան ջանքըս, երբ այլ ծոց  
ես եղել պառկած:

Ծըծերի մէջ կար մի կաքաւ, ձէն էր տալիս  
կարկնջելով.—

Քանի ձեռը նըրան տարայ, դէմ էր գալիս  
կարկնջելով...

Ես ծաղիկ կառեմ էն ծաղկին հրեղէն,  
Որը վիշտապի բերնին է բռւսել.  
Վիշտապի ահից ոչ մի հոգեղէն  
էն հրեղէն ծաղկի հոտին չէ հասել:

Ես տըզայ կառեմ էն կորիճ տըզին,  
Որ հեռուից գալով կհանքը անարդեց-  
եկաւ, սըզանեց վիշտապ-ձիւաղին,  
Հրեղէն ծաղիկը բերանից փրկեց...

ինդա սիրողների զլիսից չի պակսում միւսի  
 չոր ու ցաւ:—  
 Դեռ չը լուսաց ու, դեռ եարբ եարից լաւ չը  
 կշտացաւ,  
 Մէկ էլ էն տեսար՝ մօլլան կատաղի զռուց  
 ազանը,  
 Կարծես թէ յանկարծ թոկը կտրելով փառ-  
 իաւ դազանը:  
 Ահզն, տարակուսած սիրահարները թուշ  
 թըշին հրպած՝  
 Ակսան դողալ ինչողէս ուսիներ իրարու կը-  
 պած...

Մարդ լինի, ասի. «Այ մօլլա, մօլլա, տանես  
 իմ ցաւը,  
 Ի՞նչ ես զըսոցով էս կէս գիշերին հէնց զը-  
 ցել չաւը.  
 Ի՞նչ ես խեղձերի քըթերից հանում երջան-  
 կութիւնը,  
 Քեզնից խօ չուզեց արել ծագման թոյլաը-  
 ւութիւնը»:

Թոյլ կը տամ կընո՞ջ. որ նա մեղանչի պայմա-  
նով միայն,  
Աբ նա այն ծընի, ինչ ծընեց մէկ օր գեղ  
Օլիմպիան.—  
Նա ծընեց որդի, աշխարհի սարսափ, վիշապ-  
առիւծին,  
Աշխարհի սարսափ, հայրենիքի փայլ Ալէր-  
սանդր Մհծին:

Այս անվերջ ծով-գիշերով  
Երկու շրջան մանեցի—  
Յանկարծ եարըս յիշելով  
Ճախարակըս վանեցի:

Մօտը գնացի և տարայ  
Անուշ զինի մի փարչում.  
«Եարջան, մատաղ, բաց արա,  
Զիւն է, ոտներս է սառչում»:

Գարուն է, տղերքջան...  
 ՀԵՅ, ի՞նչ էք նըստել խեղդուած տըներում.  
 Դուրս գընանք բախչան.  
 Նառինք ծառերի հով ստուերներում,  
 Խըմենք անվախճան:

Բլրույն է խօսում...  
 Ողջ ձըմեռ մնջուած խղճուկը բըքում  
 Գարնան էք սպասում.  
 ՄԵԼԻ տեսէք հիմա ի՞նչովէս է երգում,  
 Ի՞նչեր է ասում...

— Ճերմակ ծոցըդ սուրբ տաճար է, լուս  
 ծըծերըդ՝ կանթեղ վառ,  
 Պիտի դառնամ ես ժամկոչ, զամ էդ տաճա-  
 րի լուսարար:

— Դընա, գընա, տխմար մանուկ, չեմ ու-  
 զում քեզ ոկտ լուսարար—  
 Կերթաս դուրսը կը խաղաս, թողնելով տա-  
 ճարըս խաւար:

Մի դարձընիր, հարջան, ուշ,  
Տար բերանիդ զինովլ շուշ—  
Քէզ անուշ:

Ով բամբասի՝ չարայուշ  
Աչքը մըտնի հաղար փուշ—  
Նրան անուշ:

Դինի փրչող կըծուանուշ  
Պաշեմ զունչըդ, թուշ ու մուշ—  
Ի՞նձ անուշ:

Դիշերն ելայ հս ծածուկ  
 Զեր կըտուրը կամացուկ:  
 Քեզ սպասելուց իզուր տեղ՝  
 Քունըս տարել էր այնտեղ:  
 Եւ յանկարծ ինչ հմ լըսում—  
 Դերանին սիւնն էր տառմ.  
 «Նայիր դու այս տարփողին,  
 Դըտել է լաւ անկողին.  
 Եկել, եարի հոտն առել,  
 Քունը սիրուցն է տարել»...

Մընացել եմ զարմացած.  
 Փայտը ճօշայ—չեմ լըսած:  
 Փայտն անտառի մէջ բռւսաւ,  
 Բամբասելը ո՞նց ուսաւ:

Քընած էի ևս հանգիստ—սիրալս խայթեց  
 մի սուր ցաւ.  
 Յանկարծ բերին դառը լուր. «Քո եարը քեզ  
 մոռացաւ»  
 Զեր արել, տըղերքջան, լեզուս կապուեց  
 անդուման,  
 Շուտով դեղ ու ճար արէր, չասեն մեռա  
 անդարման

Թէ ինձ երբէք մոռանաս դու,  
 Եւ ուսու ոստ, չորանաս,  
 Թէ ծոց թողնես ուրիշ մարդու,  
 Փուտ ու ճիճուի կեր դառնաս:

Դիշերը թող երազում քեզ  
 Զազրելի նա թրւայ գե, —  
 Լուս չը ծագած մօտըս վազես,  
 Նորից մօտըս, հեինե:

Փողոցի մէջ ինձ յուշիկ  
 Մի ձէն կանչեց անուշիկ.  
 Դարձայ, տեսայ ես յանկարծ  
 Եարըս կանգնած շար շապկանց:

Թուլմուլ լէշաքն էր կապած,  
 Կէս ճակատը թողած բաց,  
 Թուխ աչքերը ծարուրած—  
 Նամուսիցը ձեռն առած:

Երանի՞ քեզ, այ լուսին,  
Որ շրջում ես միշտ անքուն  
Անհուն երկնի երեսին  
Ամեն սիրուն իրիկուն:

Երդիկներից ցած նայում  
Խաղաղ բընած աղջըկանց,  
Այ փուչ, աչքով ես անում  
Սիրուններին հիասքանչ...

Կոճակն արձակ բաց ծոցին  
Քո շողերով պաշալըչում,  
Իսկ ծըծերից հրաշածին  
Յութը երկինք է թռչում:

Թռչում է նա և պայծառ  
Աստղահոյլին է զիազում,  
Եւ աստղերը խեղճանաճար  
Երկնի խորքումն են թագչում...

Երնէկ լինէի արքայահաւի նըման իմաստու  
եւ անակնկալ թըռչէի մտքով հիմա եարիւ  
տուն.

Գուցէ տեսնէի, որ ժի անզգամ  
Մըտել է եարիս ծոցը այս անզամ

Ովոր իմ եարի ծոցին մօտենայ ինձանից  
բացի,

Թող թշթըշալով սև օձը նըրա սուտ լեզուն  
խածի.

Ովոր իմ պաշած տեղերից պաշի,  
Շուն դառնայ, սև շուն, շան նըման  
հաջի:

Ո՞ր ջուրն ընկնեմ, ի՞նչ անեմ ես,  
 Գլխիս էս ի՞նչ խաղ խաղաց—  
 Սիրեկանըս կըծեց շան պէս,  
 Կըծեց ինձ, վայ, կատաղած:

Կանգուն դանակ ձեռին շողաց,  
 Յանկարծ սրտիս խոր մըխեց,  
 Էլ ոչ յիշեց իմ աղուհաց,  
 Ոչ Աստըծուց նա վախեց:

Այ ձիւնոտ սարեր,  
 Իմ սիրտը մեռաւ,  
 Վեր վաղող ժայռեր,  
 Իմ հարը կորաւ:

Կիրճեր, կածաններ,  
 Զեղ վըրա անցրիք,  
 Անտառ, անձաւններ,  
 Զեր միջում թազցրիք:

Ասէր, ուր գընաց  
 Իմ սիրելանը,  
 Ինձ թողած քընած  
 Են դաւաճանը:

Հեռաւոր երկրի ճանփորդ անկայտն,  
Չորերում ճնշուած գետ լալահառաչ,  
Չեմ աեսնում ես քեզ, ճնշում է սակայն  
Այս սե գիշերով քո տըխուր շառաչ:—

Երեխ դու էլ ինձ պէս սիրահար,  
Վշով համակռւած, մենակ, անսատար,  
Պարում ես, կանչում. «Ո՞ւր ես, եար, հէյ  
եար».  
Քուն չունես զիշեր, ոչ ցերեկ դադար:

Ամառը դեռ չէր հասած,  
 Մէկ վարդ տըւին վառվըսուն,  
 Բայց դեռ հոտը չը քաշած՝  
 Վարդըս տարան իմ սիրուն:

Գուցէ որբ եմ տարագիր,  
 Հօրից, մօրից անիծած.  
 Չեռըս դըրին բաղդի զիր,  
 Միջում հեղնանք էր զըծած...

կայծակը շանթեց. մթնեց իս երկին,  
Ընկաւ ու հանգաւ աստղըս անմեկին—  
Եարըս ինձ թողեց, չանսաց իմ «կաց»-ին,  
Դընաց—բիւր ծաղիկ յետեից լացին:

Գուցէ ևս նորան տանջեցի խանդով,  
Գուցէ սիրեցի պակաս եռանդով...

Դըրեցի նամակ լացով, հառաչով,  
Արտասուքի մէջ թաթախուած գրչով.  
Մէջը փակեցի շատ պաշ ու զըգուանք,  
Իսկ իս մէջ թողի բոլոր տառապանք:

Լեռան զլիսի ծաղիկներում  
Պառկած էի զիշերով,  
Ծաղիկները ջինջ եթերում  
Բուրում էին անխըռով:

Գլխիս վերև իմ սիրեկանն  
Նըռան խըմում էր զինի,  
Իսկ ես անհոգ նըրա ծընկան  
Տըւել էի ինձ քընի:

Եւ ինձ թըւաց. ազատ, թեթև  
Թըռաւ կաքաւ նա դառած.  
Իսկոյն ընկայ նորա յետե  
Ես բազէի թե առած:

Ծովի ափին հասայ եարիս,  
Բռնի նորան բերի յետ,  
Սակայն սէրը,—վայ իմ օրիս,—  
Սէրը թըռել էր անհետ...

Տեսայ մէկի հետ իմ եարին,  
 Մըտերմարար էր խօսում,  
 Երեի նա էն օտարին  
 Ինձանից էր բամբասում:

Եւ ինձ սիրտը յուզուած, խըռով  
 Ասաց. «Խորշիր դորանից.  
 Երբոք սէրը լինի զօրով,  
 Բաղդ մի ուզիր նորանից»:

Աւանից թըշուառ  
Արծիւն էր թոչում  
Եւ օդում շըւար  
Ահեղ կըուանչում.

«Իմ թեկից թըուած  
Փետուրը մէկ օր՝  
Մահուան նետ դառած՝  
Ինձ խոցեց այսօր»:

Անդադար վայ եմ տալիս,  
Աւազ, եարըս չէ լըսում.  
Այնքան այրուած եմ լալիս,  
Աշրիցս արիւն է հոսում:

Ովոր կորած իմ եարից  
Մէկ հատիկ լուր հասցընէ,  
Ելած հոգիս այն օրից  
Ցետ պիտի ինձ դարձընէ:

—Երկնամեմ լուսին, չես տեսել, ասա,  
Մըշեցի եարիս:

—Յակորի այգում հէնց երեղ տեսայ  
Նորան խնդալիս:  
Վարդենու տակին ժըպիտն երեսին,  
Բաժակը ձեռին  
Կոնծում էր, ասում. «Բարե տար, լուսին,  
Ի՞՛ խղճուկ եարին»:

Մէկ մարդ ունէր գոհար անզին,  
Բայց լաւ պահել չը կարաց.  
Հէնց որ եկաւ խելքը դլխին,  
Տեսաւ՝ գոհարն էր կորած:

Եստեց մենակ և դառնալի  
Լաց եղաւ նա վշտահար.  
Ողորմելի, զուր ես լալի  
Էլ չի դառնայ քո գոհար:

Երեք, տեսայ, տանում էին մէկ գեղուհի լա-  
ցով-գուժով:—  
Երեկ նա ըլոնի խըլուած, կամ խարուած  
էր փողի ուժով:  
Անիծում եւ եռ այն սէրը, որ հանում է  
անարդ վաճառ.  
Կարմիր խնձոր, քաղցր շաքար սէրն է ու-  
զում միակ վըճառ:

Ո՞ւր կորան, ընկեր,  
 Քո հրձուանք, երգեր.  
 Այդ ինչ տանջանք է դրօշմած քո դէմքին.  
 Ոչ որդիդ մեռաւ,  
 Ոչ որդիդ կորաւ,  
 Կամ դաւաճանեց իր հայրենիքին:

Ես ունեմ լալուն,  
 Դլխիս վայ տալուն,  
 Ի, իմ կորըստին ոչինչ չի հասնի.  
 Կորցըրի անգին,  
 Իմ հոգու հոգին,  
 Անհողի եմ ես—շանթահար կաղնի:

Այ լալկան աչքեր, այրեմ ձեզ կրակով,  
Զը տեսնէք եարին,  
Այ քծնող լեզու, կտրեմ դանակով,  
Զերդես այն սառին:

Միլու իւտ արիւնոտ, նետեմ տանջալի  
Կրծքից ոտի տակ,  
Թռղ ցամքի քո մէջ արեսն հետ եարի  
Դառը յիշատակ:

Երկու սպառագէն՝  
 Արծիւն ու բաղէն  
 Մէկ կաքաւ մարի  
 Փարախը գըրին  
 Եւ մեծ-մեծ քարի  
 Շուրջը պատ արին։  
 Ազա նստեցին,  
 Սըրեցին կեռ-կեռ  
 Կըտուցն ու ճանկեր,  
 Կոիւ ըսկսեցին,  
 Թէ արդեօք որին  
 Կը հասնի մարին։

Յանկարծ ցած թլուաւ,  
 Կաքաւին տարաւ  
 Վարուժանն անզէն։  
 Բերաններ բացին,  
 Իրար նայեցին  
 Արծիւն ու բաղէն...

Աւզում եմ կտրել այս շղթանս կրբակ,  
Ար կապում է ինձ նենդ աշխարհի հետ,  
Փախչել անսապատ և խոստաճարակ  
Մազեղեն հազած չըքանալ անհնատ...

Բայց մեռնել այնտեղ անյայտ ու չնշին,  
Ինչպէս ձայն մորող, ծաղիկ ցրտարել,  
Մեռնել չը տրւած զեռ պարտքաս վերջին,  
Ոչ, ես չեմ կարող, չեմ կարող երրեր:

Դարձաւ երկընքից և շիրիմից ցած  
Անիծեց հոգին մարմելին դառնացած.  
«Ով փրտող ընկեր, մեղք արինք մեկտեղ,  
Դու դո՞ւ ես, իսկ ես տուժեցի այստեղ»:

Մարմինը շիրմից ձայն տրւեց զողզող.  
«Հոգ Եփ առաջ, կը դառնամ և հող,  
Բայց զու յոյսերով, ցնորքով ապրեցիր,  
Եւ զըրտ համար հիասթափուեցիր...»

Դալար տունկերով պարտէզըս լցրի,  
Անդուլ ջանքերով սրնուցի, հասցրի.  
Եկաւ թշնամին, այրեց, կոխեց այն,  
Փշրած յոյսերով ինձ թռղեց միայն:

Եւ ման եմ գալիս աչքիս արտասուք,  
Դառնալի ողբով, սրտով սև ու սուզ,  
Չափեր կորցըրած կաքաւի նըման,  
Որ կոկըծում է վշտով աննըման:

Ես ման եմ գալիս և սարեր կտրում,  
Բայց զուր եմ վշտիս դարմանը պտրում.  
Եկ, ուր ես, որսորդ, անողնք, անսիրտ,  
Նետ մըխիր կրծքիս, տուր մահուան հանգիստ:

Անցնում էի մի խուլ տափով  
Եւ տեսայ գանդ չոր, փըտած.  
Ոտքս դիպաւ—նա սարսափով  
Ցնցուեց, դէմքիս թող փըրթաց:

Դառնածիծաղ իմ յանդիման  
Խուլ քրթմընջաց նա այսպէս.  
«Կտրիճ, ես քեզ էի նըման,  
Նայիր, հիմա ինչ եմ ես...»

Ծառ կայ, զուգուած է նարինջ, թուրբնջով,  
Ծառ կայ, որ զոհ է մենակ նարբնջով,  
Ծառն է գեղեցիկ իր պտղէ փընջով—  
Միթէ տըգեղ է ուսին ոչընչով:

Շատն իր եարի մօտ չի շարժում պլքնչով,  
Թէ ես էլ լըուեմ՝ զուարձանամ ը՞նչով,  
Կան սիրուց ննջող մահուան խոր նընջով,  
Թէ ես էլ մեռնեմ՝ պարծենամ ը՞նչով:

թէ լինէր կաթիլ այն գինուց միայն,  
Արից ըմպեցին Ենովքն, Եղիան,  
Ար ըմպեց հայոց Մեծըն Գրիգորը  
Եւ պարզ գուշակեց իր մահուան օրը,

Կըմպէի ես այն և մարզարէի  
Անյողողողդ ձայնով կը բարբառէի.

«Ո՞վ հայ ժողովուրդ, ինչու ես լալիս.  
Հասիլ է ժամը—քո տէրն է զալիս.  
Նա, որ շատ շատին արաւ դեղ ու ճար,  
Նա քեզ էլ կանի, քեզ էլ անպատճառ:





*ԽՐԱՏԱԿԱՆ ՌԱՄԱՎԻՐՈՒԵՔ*



\*  
\* \*

Ինձ լոիր, եղբայր,—ամեն մի խօսքըս մէկ  
անգին գոհար.

Կեանըն է ծով ահեղ, մարմինը՝ մէկ նաւ,  
միտքը՝ նաւավար.

Աշխատիր բարձել վըրադ շահաւոր զանձեր  
հոյակապ,

Աշխատիր յաղթել գոռ ալիքներին հասնելու  
ծովափ:

\*  
\* \*

Ինձ լըսիր, եղբայր: Աւրիշին երբէք մի  
դատապարտիր.

Նայիր ինքըդ քեզ ուրիշի աչքով, քեզ միայն  
դատիր.

Կըուի մէջ եղիր դու անյուշահատ, յանդուզն  
ու յամառ,

Բայց մի բան երբէք դու մի մոռանար—  
մահ կայ քեզ համար:

\*  
\* \*

Ես ընկնուժ էի, իզուր կանչեցի բարեկամ-  
էակ.

Ցինուեցի բաղկիս, այն ճանաչեցի բարեկամ  
միակ.

Բաղուկըս զործեց—բարեկամ, եղբայր շա-  
տացան իմ շուրջ,  
Բայց նա չի զործի—բարեկամ, եղբայր,  
բոլորն է անուրջ...

\* \*

Առիւծն առիւծի մըսից չի ուտի ինչքան  
ստիպես—  
Առիւծ է ինքը, յարգում է առիւծ վեհ առ-  
իւծի պէս,  
Հաստատ է ծառը իր բուսած տեղում,  
Խըսիս ու մեծապարծ,  
Բայց դու նոյն ծառից տուր կացնին մի  
կոթ—ծառն ընկաւ յանկարծ:

\* \*

Զոր ծառի ճիւղին չի ասի «զալար» ոչ մի  
իմաստակ.  
Աև ներկած մաղին վըստած ծերուկի չեն ա-  
ռում «սպիտակ»:  
Բայց մեղաւորից քիչ բան է ուղում բարե-  
միտն Աստուած—  
Մէկ «մեղայ» ասէ և սկը ձեռաց եղաւ սպի-  
տակուած...

\*  
\* \*

Օրհնեալ է Աստուած—դասեց ամեն բան իր  
յարմար դասի.  
Սահղեց տիեզերք, բաժանեց նըրան նա  
երեք մասի.  
Նա հրեշտակներին երկինք պարզեց, Ա-  
դամին՝ դըրախտ.  
Երկրին մընացին անասունները, անբաններն  
անըրախտ...

\*  
\* \*

Աւգում ես լինել մարդկանցից սիրուած,  
մարդկանց դուրեկան,—  
Դարձիր հող նըրւաստ, թող մարդիկ կոխեն,  
քեզ վըրա ման դան.  
Ի՞նչ կայ երկաթից տւելի ամուր—կրակիցն  
է հալչում—  
Դարձիր ջուր ճըկուն, կրակն է նըրանից  
զարհուրում, խորշում:

\*  
\* \*

Մէկ են մեզ համար սէզ բազէն ու բուն  
անտառում, մօրում.  
Մէկ են մեզ համար գոհարն ու քարը ծո-  
վերի խորում.

Ո՞ւմն է ծառայում խենթի մօտ զիտունն իր  
խոր ճառերով.  
Ո՞ւմն ևս ծառայում կուրի առաջին ճըրադ  
վառելով:

\*  
\* \*

Իզուր ջանացիր. չըզըտար մէկ մարդ յարզըդ  
ճանաչող.  
Դու անմիտ էիր, խողերի առաջ դոհարներ  
ածող.  
Ե՞նչ զիտէ խոզը դոհարի զինը, աղը է նա  
փորում.  
Նա քո դոհարը կոխում է ոտով, քեզ զնչով  
այրում:

\*  
\* \*

Ամբողջ աշխարհում ես զըտայ միայն մի  
մարդուկ անգէտ.  
Թողել էր ցամաք, անհաստատ ջըրին շըջում  
էր վէտ-վէտ.  
Շինել էր ինչոր մէկ փայտէ տապան, յոյս  
դըրել վըրան.  
Այ մարդ, խելքի կաց, կընկղմես, կընկնես  
ձկների բերան:

ՊԱՐԿԻՑԻ  
ՀՐԱՄԵՇՔ



Մայրն անիծեց իր զաւակին. «Ի՞մ որդի,  
դու պանդխտանաս,  
0տար երկրում հէք պանդխտի խոր վշտե-  
րով դու վշտանաս.  
2որ քարը բեղ սընարք անես, թաց աւազին  
պառկես տրտում,  
Արև չելած քունըդ կոտրես, յոյսըդ մեռնի  
բու սկ սրտում»:

Եւ կատարուեց մօր անէծքը: Մօտենում  
էք հրաժեշտն արագ:  
Ցիշում էք միշտ մոայլ ապազան որդին վը-  
հատ և անճարակ.  
«Աստուած զիտէ անյայտ ճանփաս—ուր  
կիջեցնէ, ուր է տանում,  
Ուզ կը կապէ խաչ իմ կրծքին, հող թափէ  
իւ զերեզմանում...»

«Կերթամ» վաղուց կրկնում էր նա—չէր  
 հաւատում մայրը թշուառ,  
 Բայց երբ «ոքնաս բարով» ասաց, մայրը  
 յանկարծ մընաց շըւար.  
 Ասպանդակին երբ ու դըրեց, զարհուրած  
 մօր կապուեց լեզուն,  
 Կարողացաւ միայն ասել. «Գրնաս բարով, իմ  
 սիրասուն.»  
 Այն ճանփայով, ուր ու գընես, վաշդ ու  
 մեխակ դէմքդ բուսնեն.  
 Այն քաղաքը, ուր զու մասնես, Գրովի ձայն  
 ներ թող չը հասնեն.  
 Ինչ խնձոյրին ներկայ լինես, զինով զեղան  
 զաւաթ, զաւեր.  
 Ծովերը քեզ զինի զառնան, խորտիկներով  
 լցուիննաւեր...»

Իսկ կուչ եկած մղկըտում էր մատա-  
 ղանաս կինը ծածուկ.  
 Աղրիւրի պէս արցունք թափում և ազօթում  
 էր կամացուկ.  
 «Քեզ և՛մ կանչում երկրից երկինք, ով Արա-  
 բիչ, լըսիր իմ ուխտ-  
 եարիս կըտկը այլում է ինձ, ովանիր ամեն  
 անտէր պանդուխտ.»

Նուտով դարձրու խնդակիցը — միակ ճարն  
իմ սրտի խոցին.  
Քուշը դընեմ նըրա թըշին, հոգիս փըշեմ  
նըրա ծոցին...»

Նայեց պանդուխտն իր սիրածին, կան-  
չեց այսպէս. «Ինձ նայեցէք.  
Ես թողնում եմ իմ եարն աւանդ, վարդերի  
մէջ փայփայեցէք.  
Եթէ զառնամ, տիրոջ հասցրէք աւանդն ան-  
խախտ իր կաթողին,  
իսկ թէ մեռնեմ, աւանդը ձեզ, ողորմի  
տուէք տիրոջ հոգին...»





3 u b l



## Ս Ի Բ Ե Բ Գ Ե Բ

Եթէ հրամայեմ անյատակ ծովին . . . . .	13
Երբ յայտնուեց սէրն երկրում . . . . .	14
Խչն համար մայրս քերեց ինձ աշխարհ . . . . .	15
Աշքրդ են ծով-հրաշալիք . . . . .	16
Երկու մարդ կան խղճալու . . . . .	17
Երնէկ ես փոքրիկ ծիծեռնակ լինեմ . . . . .	18 ✓
Արե փախչւեմ է սարից . . . . .	19
Միրում եմ քեզ մաքուր սիրով, մշտավառ . . . . .	20
Միրալու դարձել է մի մանուկ լալկան . . . . .	21
Լուսպէմին՝ առուածորից . . . . .	22
Կարմիր վարդ կանաչ բիով . . . . .	23
Վաղուցուան իմ սէր . . . . .	24 ✓
Դէկ մարդ ձեռին փայտանատ . . . . .	25 ✓
Ես աչք, դու լուս . . . . .	26 ✓
Ես եմ կարծըր՝ քարի նըման . . . . .	27
Պատկերիդ տռաջ փարոս վառելով . . . . .	28
Եար, քո սէրը արին դառած . . . . .	29 ✚

\* ) Եղագրով նշանակուած են այն ոտանաւորներ, որոնց մէջ պահպանուած է Քուչակի տաղաջանութիւնը և կը կնուած միևնույն յանդերը:

✓ «Հեռացիր, զընա, ինձ կրկնում էի . . . . .	30
✓ Եար, անգութ, յամառ . . . . .	31
✓ Լալիս էի դառնահառաշ . . . . .	32
✓ Բարակ մեջ ու բուլ զօտի . . . . .	33
✓ Թո սիրուց ինչպէս աշնան չոր տերի . . . . .	34
✓ Այ իմ սիրուն, հազար սիրուն . . . . .	35
✓ Զարթիր, իմ եար, անուշ քընած զու կըտրին .	36
✓ Գունստել եմ խնկի ննան . . . . .	37
✓ Ինչպէս մի քաղցած մանուկ զեռածին . . . . .	38
✓ Մէկ եղջերու սառն աղբիւրի . . . . .	39
✓ Ինձ տևեսեցին մահճի մէջ լալիս . . . . .	40
✓ Են մի պաշը, որ ինձ արւիր վերջապէս . . . . .	41
✓ Թուխ աչը ու թուխ ունք ունես . . . . .	42
✓ Երկարիր զիշեր . . . . .	43
✓ Սիրարս երկու դուռն ունի . . . . .	44
✓ Սոխակը այզում վարդենուն թառած . . . . .	45
✓ Հեյ, մի պարձենար, լուսին երկրուն . . . . .	46
✓ Վաղ-վաղ բլնից վերկացայ . . . . .	47
✓ Աստուածնի սուրբ կիրակի . . . . .	48
✓ Իմ սիրեկանի կարօսից տարուած . . . . .	49
✓ Երնէկ նըրան, ով ունի երկու հատ եար . .	50
✓ Ես տեսայ մէկ զեղեցկունի . . . . .	51
✓ Երիկ ևս տեսայ մէկ տանու կարտ . . . . .	52
✓ Ուր էիր զու, անյայտ էակ . . . . .	53
✓ Ճնշում է ինձ նախազդացում . . . . .	54
✓ Ես թաշուն էի ազատ ու թեթե . . . . .	55
✓ Ինձ սիրում են երկու եար . . . . .	56
✓ Ես մի վայրի վարուժան . . . . .	57
✓ Ի՞նչ էք բամբասում . . . . .	58
✓ Երիս ունես՝ լուսին բոլոր . . . . .	59
✓ Այ մեր թաղի նոր ընակիչ . . . . .	60

Հումնի մէջ ու արեի . . . . .	61 ✓
Այլ կարմիր ու ճերմակերես . . . . .	62 ✓
Քո ստեղծածին, Տէր գըթած . . . . .	63 ✓
Իմ եար, մեզ զիր եմ դրկել . . . . .	64 ✓
Ծնուելուս օրից մինչեւ հիմա դեռ . . . . .	65
Աշքս սրտիս մէկ անդամ . . . . .	66
Իմ եարը նօրանց անից . . . . .	67
Կանաչ-կարմիր քո վրան . . . . .	68 ✓
Այդ ովէ որ երդիկին . . . . .	69
Ես շատ ու շատ յիմարացայ . . . . .	70
Ազատիր, Աստուած, մարդու շարիթից . . . . .	71
Եարիս տեսայ, շաւիդով ցած էր զնում . . . . .	72 ✓
Հերիր տանջուեցանք . . . . .	73
Թողէր, որ զռոամ . . . . .	74
Քո սէրն է պահուած անտակ ծովի մէջ . . . . .	75 ✓
Թոյլ տուր մանեմ, խնձոր քաղեմ . . . . .	76 ✓
Այդհատանից քաղած վարդիկ . . . . .	77
Երանի նրան, ով իր եարն առաւ . . . . .	78
Իրկու ախոյեան մզում են մրցում . . . . .	79 ✓
Օքնուի քեզ ծնող մայըը . . . . .	80 ✓
Դու աշխարհի մատանի . . . . .	81 ✓
Դուրս եկայ ես զիշերով . . . . .	82
Իմ նունուֆոր—ջրի զերի . . . . .	83
Ես ընած էի . . . . .	84 ✓
Մարուր սրտով, մտորուն . . . . .	85 ✎
Աշխարհ-աշխարհ ման եկայ . . . . .	86
Մըծերի մէջ կար մի կաքաւ . . . . .	87
Ես ծաղիկ կասեմ . . . . .	88
Աեղձ սիրողների զլիսից չի պակսում . . . . .	89
Թոյլ իը տամ կընո՞ջ, որ նա մեղանչի . . . . .	90
Այս անվերջ ծով-զիշերով . . . . .	91 ✓

Դարուն է, տղերքջան . . . . .	92
✓ Ծերմակ ծոցը սուրբ տաճառ	93
Մի դարձնիր, եարջան, ուշ . . . . .	94
✓ Գիշերն ելայ ես ծածուկ . . . . .	95
Քնած էի ես հանգիստ . . . . .	96
Թէ ինձ երրէք մոռանաս զու . . . . .	97
✓ Փողոցի մէջ ինձ յուշիկ . . . . .	98
✓ Երանի քեզ, այ լուսին . . . . .	99
✓ Երնէկ լինէի արքայահաւի նման . . . . .	100
Ո՞ր ջուրն ընկնեմ . . . . .	101
Այ ձիւնոտ սարեր . . . . .	102
Հեռաւոր երկրի ճանփորդ անկայան . . . . .	103
Ամառը զեռ չէր հասած . . . . .	104
Կայծակը շանթեց . . . . .	105
✓ Լեռան դլիսին, ծաղիկներում . . . . .	106
Տեսայ մէկի հետ իմ եարին . . . . .	107
✓ Աւանից թշուառ արծիւն էր թոշում . . . . .	108
Անդադար վայ եմ տալիս . . . . .	109
Երկնաճնեմ լուսին, շես տեսել . . . . .	110
✓ Մէկ մարդ ունէր զոհար անզին . . . . .	111
✓ Երեկ տեսայ տանում էին մէկ զեղունի . . . . .	112
Ո՞ր կորան, ընկեր, քո հրճուանք, երգիր . .	113
Այ լալկան աշքեր, այրեմ ձեզ . . . . .	114
Երկու սպառազէն՝ արծիւն ու բաղէն . . . . .	115
Ուզում եմ կարել այս շղթան-կրակ . . . . .	116
✓ Դարձաւ երկնքից և շիրիմից ցած . . . . .	117
Դալար տունկերով պարտէզս լցրի . . . . .	118
Անցնում էի մի խուլ տափով . . . . .	119
✓ Ռառ կայ, զուզուած է նարինչ, թուրբնջով .	120
Թէ լինէր կաթիւ այն զինուց միայն . . . . .	121

## ԽՐԱՏԱԿԱՆ ՈՏԱՆԱԿԻՈՐՆԵՐ

Ինձ լսիր, եղբայր,—ամեն մի խօսքու մէկ ան-	
դին զոհար . . . . .	125
Ինձ լսիր, եղբայր, ուրիշին Երրէք մի դաստ-	
պարտիր . . . . .	125
Ես ընկնում էի . . . . .	125
Ասիւծն ասիւծի մաից չի տաի . . . . .	126
Չոր ձառի ձիւղին չի ասի «զալար» . . . . .	126
Օրհնեալ է Ասոուած . . . . .	127
Ուզում ես լինել մարդկանցից սիրուած . . .	127
Մէկ են մեզ համար . . . . .	127
Ի զուր ջանացիր . . . . .	128
Ամբողջ աշխարհում ես գտալ . . . . .	128

## ՊԱՆԴԻՏԻ ՀՐԱԺԵՇՔ

Մալթի անիծեց իր զաւակին . . . . .	131—133
Յանկի . . . . .	137—141
Վրիսկակինք . . . . .	143

121 (continued)

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Հրեա տող. Տողած է

Վեաք է լինի

8	զերջին զիանականների կարինեաներից	զիանականների անհիւրընկու կո- րինեաներից
31 4	զեր. չահ առած	չահ արած
64 15	> զիրկուծոց իմ	զերկուծոց իմ
89 2	> չոր ու ցաւ	չոր ու ցաւ
90 3	> որ նա այն ձնի, ինչ ձնեց մէկ օր	որ ձընի որդի, ինչ- ովիսին ձընեց
110 3	> երեղ	երեղ
112 1	> երեղ	երեղ
125 4	ներբ. իզուր կանչեցի	զուր էի կանչում

